ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ,ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Սերվիս

(Ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն – Սերվիս դասիչ 101801.01.6

Կուրս 1 -ին

Որակավորումը - բակալավր

Ֆակուլտետ – Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև - առկա 2-րդ կիսամյակ, 2 շաբաթ, 3 կրեդիտ

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. թիվ 7. 25.01. 2024 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Վ. Հարությունյան

Հաստատված է Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. N 9 25.01. 2024 թ.)

Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Հ. Պապոյան

Դասախոս՝ Սասուն Բաղդասարյան

Վանաձոր 2024թ

Ծրագիր

Սերվիս մասնագիտության առաջին կուրսի ուսումնական պրակտիկայի

Պրակտիկայի նպատակը: ՈՒսանողները պետք է կարողանան իրենց տեսական գիտելիքները *կիրառել* գործնականում՝ ձեռք բերելով այն կարողություններն և հմտությունները, որոնք ներկայացվում են սերվիսի ոլորտի մասնագետին: Սերվիս մասնագիտության համար ուսումնական պրակտիկայի *նպատակն է* ուսանողներին հնարավորություն ընձեռել հավաքագրել, դասակարգել, վերլուծել, համադրել և գնահատել պրակտիկայի օբյեկտներին վերաբերվող մասնագիտական տեղեկատվությունը, կատարել խմբային, անհատական, կազմակերպչական աշխատանքներ և ընդլայնել ու զարգացնել մասնագիտական աշխարհայացքը, հմտություններն ու կարողությունները:

Խնդիրները: Ուսումնական պրակտիկայի խնդիրներն են՝ ուսանողներին հնարավորություն ընձեռել ուսումնասիրել և բացահայտել սերվիս ծառայությունների մատուցման համակարգը, կատարած գործառույթները, բնական օբյեկտների սերվիս և զբոսաշրջային նշանակությունը:

Պրակտիկայի վերջնարդյունքները: Ուսումնական պրակտիկան պետք է ապահովի ուսանողների *ճանաչողական հմտությունների ձևավորումը:* Ուսանողներին հնարավորություն է տրվում *ճանաչել* մասնագիտական ոլորտի օբյեկտները և դրանցում տեղի ունեցող գործընթացները: Այդ նպատակով անհրաժեշտ է, որ տարբեր առաջադրանքների օգնությամբ ուսանողները *ուսումնասիրեն* պրակտիկայի օբյեկտների ներքին և արտաքին միջավայրերը՝ օբյեկտը *բազմակողմանիորեն ճանաչելու նպատակով:* Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն *կիրառել* սեփական գիտելիքները: Նրանք պետք է կարողանան *բացահայտել* սպասարկման ոլորտի աշխատակիցների պրակտիկ հմտություններն ու կարողությունները:

Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է *կատարեն* ինքնուրույն և խմբային աշխատանքներ: Որն ուսանողների մոտ կձևավորի թիմային աշխատանք կատարելու կարողություններ և մասնագիտական շփման հմտությունները:

Կազմակերպչական փուլը

Կազմակերպչական փուլը կարևոր նշանակություն ունի պրակտիկայի ճիշտ պլանավորման, կազմակերպման և ընթացիկ գնահատման համար: Իրագործման փուլի ժամանակ իրականացվում է այցելություն պրակտիկայի օբյեկտներ և կատարվում են պրակտիկայի նպատակներից բխող մասնագիտական աշխատանքներ: Իրականացվում են պրակտիկայի ընթացիկ արդյունքների ամփոփումներ և քննարկումներ:

Անհրաժեշտ է կատարել կազմակերպչական հետևյալ աշխատանքները .

Նախնական տեղեկատվություն:

Ներկայնել պրակտիկայի նպատակը, պրակտիկայի օբյեկտները՝ ընդհանուր բացատրություններ տալով դրա արտաքին և ներքին միջավայրերի, ստեղծման պատմության, աշխարհագրության և մասնագիտական այլ հարցերի մասին: Բացատրությունն ավարտելուց հետո ղեկավարը ներկայացնում է ուսանողների կողմից կատարվելիք մասնագիտական աշխատանքները:

Գործնական աշխատանքներ: Ուսանողներն ըստ նախատեսված մասնագիտական . նպատակային առաջադրանքների սկսում են ինքնուրույն ուսումնասիրել պրակտիկայի օբյեկտի արտաքին և ներքին միջավայրերը, հետազոտման մեթոդները՝ նկարագրություն, դիտարկում, սոցհարցում, վերլուծություն, փաստական տվյալների հավաքագրում: Անհրաժեշտ են ղեկավարի և այլ մասնագետների բացատրությունները:

Յուրաքանչյուր օրվա աշխատանքներն ավարտից հետո ղեկավարն ամփոփում է կատարված աշխատանքները, ներկայացնում սեփական դիտարկումները, կատարում բացահայտող հարցադրումներ, պարզաբանում կատարված աշխատաների նպատակը և հաջորդ օրվա պրակտիկ աշխատանքների կազմակերման բնութը :

Պրակտիկայի Երթուղիների մշակում

1. Ամսաթիվ
2. Երթուղի
3. Երթուղու նպատակը
4. Երթուղու և պրակտիկայի հիմնական օբյեկտների համառոտ նկարագրությունը՝ աշխարհագրական դիրքի բնութագիր
5. Պրակտիկայի օբյեկտի գնահատականը սերվիսի և զբոսաշրջային տեսանկյունից՝ ներկայացնել ծառայությունների կառուցվածքը,

զբոսաշրջային գրավչությունը և առանձնահատկությունները, հիմնախնդիրները

6. Կատարել կանգառ պրակտիկայի օբյեկտների, վերլուծության նպատակով
7. Ամփոփում պրակտիկայի ընթացքում ստացված տեղեկատվության և ձեռք բերած հմտությունների վերաբերյալ

Յուրաքանչյուր երթուղի պետք է ներկայացնել ըստ նշված պահանջների: երթուղին բաղկացած է մի քանի կանգառներից, ուստի ըստ այցելության հերթականության պետք է նշել Կանգառ օբյեկտի անվանումը, բնութագիրը, առանձնահատկությունները:

Արդյունքները պետք է շարադրվի ըստ հետևյալ պահանջների.

Ներկայացնել պրակտիկայի օբյեկտների ընդհանրական և համեմատական վերլուծությունը վեր հանելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է հստակորեն ներկայացնել այցելած յուրաքանչյուր պրակտիկայի օբյեկտի, երթուղու ընդհանուր գծերն ու տարբերությունները զբոսաշրջային և սերվիս ծառայությունների բնագավառներում:

Կատարել առաջարկություններ ուսումնասիրված օբյեկտների ծառայությունների համակարգում առկա խնդիրների լուծման և բարելավման համար:

Ներկայացվող հաշվետվություններում և այլ աշխատանքներում պետք է նշել պրակտիկայի օբյեկտների մասին տեղեկատվության աղբյուրները:

Ուսումնական պրակտիկայի ժամանակացույց

60 ժ -10 օր

Ղեկավար՝ ա.գ.թ., դոցենտ Սասուն Բաղդասարյան

Հ/Հ	Պրակտիկայի ձևը	Պրակտիկայի համառոտ նկարագիրը	վայրը	Տևողու-թյունը	Ամսաթիվ
1	Նախապատրաստական փուլ	Ուսանողներին ներկայացնել պրակտիկայի ծրագիրը	ՎՊՀ	1օր	
2	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ	Լեջան գյուղ Կարմիր եկեղեցի, Օձունի եկեղեցի, Դեբեդ գետի հովիտ	1 օր	
3	Ուսումնական պրակտիկա	Ծանոթություն ռեկրեացիոն օբյեկտների հետ, քարտեզագրում:	Վանաձոր Բուսաբանական այգի	1օր	
4	Ուսումնական պրակտիկա	Ծանոթություն ռեկրեացիոն ծառայությունների հետ	Ստեփանավան Մայորի ձոր, առողջարանային գոտի, Ձորագետի հովիտ	1օր	
5	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ	Վանաձոր գետի հովիտ	1 օր	
6	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ	Տաշիր գետ, Մեծավանի ջրամբար,	1 օր	
7	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում երկրագիտական ցուցանմուշների հետ	Ք. Վանաձոր Երկրագիտական թանգարան	1օր	
8	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ	Դսեղ Սուրբ Սարգիս լիճ	1 օր	
9	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ	Տանձուտ գետի վերին հոսանք	1օր	
10	Ուսումնական պրակտիկա	Ծանոթացում բնական զբոսաշրջային և սերվիս օբյեկտների հետ, պրակտիկայի ամփոփում	Ալավերդի, Ախթալա, Հաղպատի վանական համալիր	1օր	

Պրակտիկայի գնահատում

Գնահատման բաղադրիչները	միավորը	Գնահատում
1. հաճախելիություն	0-10	
2. սպասարկման համակարգի ճանաչում	0-20	
3. **մասնագիտական հմտություններ** ▪ Սերվիսի(ծառայությունների և զբոսաշրջության) ոլորտի աշխատանքներին ակտիվ ներգրավվում ▪ Ծառայությունների և զբոսաշրջության կազմակերպման ռազմավարական պլանների մշակում ▪ Տեսական գիտելիքների և գործնական ունակությունների ներկայացում	0-5 0-5 0-5	
4. **մասնագիտական աշխատանք** ▪ Մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների կայացման կարողություն ▪ Այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու ունակություն ▪ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հմտություն	0-5 0-5 0-5	
5. **ստեղծագործական աշխատանք** ▪ Սպասարկման ծառայությունների վերաբերյալ նոր մեթոդների կիրառում ▪ Տարաբնույթ մշակութային միջավայրերում աշխատելու ունակություն ▪ Աշխատանքային ռեսուրսների կառավարման աշխատանքներին մասնակցություն ▪ Սպասարկման և զբոսաշրջության ոլորտներում ինքնուրույն ստեղծագործական գործունեության իրականացում	0-5 0-5 0-5 0-5	
Պաշտպանություն	0-20	
Ընդհանուր միավոր	100	

Կոմպետենցիաներ

որոնք ուսանողները պետք է ձեռք բերեն ուսումնական պրակտիկայի արդյունքում

ա) Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,

ԳԿ6 երկրորդ օտար լեզվի իմացություն,

ԳԿ7 տարրական համակարգչային գիտելիքներ,

ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն).

բ) Միջանձնային կոմպետենցիաներ (ՄԶԿ)

ՄԶԿ6 բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,

ՄԶԿ7 միջազգային միջավայրում աշխատելու ունակություն.

գ) Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություն,

ՀԳԿ7 այլ երկրների մշակույթների և սովորույթների իմացություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

ՀԳԿ9 նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն.

դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ-6 ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը, կատարել համապատասխան վերլուծություններ, իրականացնել գիտական կանխատեսումներ և եզրահանգումներ,

ԱԿ7 ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի գնահատման ունակություն,

ԱԿ11 տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակություն: